





20 APR 2006

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՃՁԵԱՆ ԳՐԱՏԱՆ

84-

115

10 NOV 2011  
PHL 710

6.68 այ ԵՐԿՈՒ

# ԱՆՎԱՐՏԻՆԵՐ

Կ.ՍԱ.Կ.Խ.Ա.Դ. ՄԷԿ Ա.ԲԱՐ

ԹԱՐԳՄԱՆԵԼ Ի ԳԱՂՂԻԵՐԵՆ

3/3  
91816



1910

ՏՊԱՐԱՆ ՕՆՆԻԿ ԲԱՐՄԵՂԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ԿԱԼԱԹԱ - Կ. ՊՈԼԻՍ



452

## Ա Ն Զ Ի Ն Ք



Միւսիւ Թիմբրօն  
Միւսիւ Թաքառ  
Պանդոկապես կին մը  
Ս.նգդիացի կին մը  
Պանդոկին ծառան  
Ս.նգդիացի կնոջ ծառան



## ԵՐԿՈՒ

# ԱՆՎԱՐՏԻՆԵՐ

Տեսարանն է պանդոկի մը սրամիր. ազ ու ձախ կողմը պատուհան է դուռներ, մեջեղը վարագոյրով ծածկուած մահնակալ մը, սեղան մը եւ մեկ բանի արռո:

### ՏԵՍԻ. Ա.

ՊԱՆԴՈԿԱՊԵՏՈՒՀՅԻՆ (Մինակ)

Ահա Բարիզի կառքերը կը մօտենան. անշուշտ մէկ երկու յաճախորդ պանդոկս պիտի իջեւանին, երթառ նայիմ: (Մեկնի)

### ՏԵՍԻ. Բ.

ԻՄ.ԲԱՌԻ, ԹԻՒԲԸԹՈՆ, Կոքը ՊԱՆԴՈԿԱՊԵՏՈՒՀՅԻՆ

Բաք.— (Գրակն) Է բարեկամ, ալ բաւական չեղաւ:  
Թիք.— Զդէ՛ Աստուածդ սիրես, ձգէ՛:  
Բաք.— (Ալ մՏնեն) Մազ մնաց որ սորքս կոտրեիր.  
Թիք.— Ի՞նչ կըլլայ եղեր.  
Բաք.— Քիչ մ'ալ ուշադրութիւն ընկլու ես, կո՛չտ ժարդ.

Թիք.— Հէ՛, ի՞նչ ըսիր, ի՞նչ ըսիր.

Բաք.— Ի՞նչ պիտի ըսեմ, կոչտ մարդ ըսի:

Թիք.— Հա, սանկ ըսէ, ես ուրիշ բան հասկցայ:

Պաք. — Որչափ սխալեր եմ. առաջին անգամ քեզ  
վաճառական մը կարծեցի :

Թիք. — Չէ. այն տեղուանքը գործ չունիմ :

Պաք. — Ո՞ր տեղուանքը :

Թիք. — Վարժարանը ի՞նչ պիտի ընեմ,

Պաք. — Վարժարան չէ, վաճառական ըսի :

Թիք. — Ես ալ քեզի վաճառական չմմ ըսի :

Պաք. — Բայց ճամբորդութեան ժամանակ, հաւա-  
տացիր թէ 86 գաւառին մէջ նմանդ չի գտնուած իշուն  
մէկն ես եղե :

Թիք. — Ի՞նչ ըսիր, ի՞նչ ըսիր.

Պաք. — Ի՞նչ պիտի ըսեմ, է՛շ ըսի :

Թիք. — Հա, սանկ ըսէ, ես ուրիշ բան հասկցայ : Եւ  
դուն ալ կը կարծես թէ քու ընկերակցութենէդ ես կա-  
խորդիմ, այդ բամակակը ականջէդ հանէ : (ՄՏնէ Պանդո-  
կապետուիին)

Պան. — Բարի եկեր էք սրբոնայք :

Պաք. — Ա՛ ամիկն, կարծեմ պանդոկիս տէրը դուք  
էք, եթէ կը հաճիք՝ աս պարոնին ճամբան ինձ ըրած  
կոշտութիւնները ձեզի պատմեմ :

Պան. — Առ այժմ ներեցէք

Պաք. — Լաւ, բաէք ուրեմն թէ շոգենաւը հիմա  
պիտի գայ .

Թիք. — Տիկին, շոգենաւը հիմա պիտի գայ .

Պաք. — Բայց ինչու իմ խօսքերս կը կրնես .

Թիք. — Դուն ալ ինչու իմ ըսելիքներս կըսես :

Պան. — (Աս ի՞նչ տեսակ մարդիկներ են.) Ոչ պարո-  
նայք, շոգենաւին գալուն տակաւին ժամանակ կայ :

Պաք. — Ուրեմն ինձի սենեակ մը տուէք :

Թիք. — Ինձի ալ սենեակ մը . .

Պաք. — Նորին սկսար, թթում զլուի .

Թիք. — Թթում զլուիր դուն ես :

Պան. — Պարոններ, պանդոկիս մէջ ընդամէնը պարապ  
ըլլալով սրան մը եւ այս սենեակը մնացած է, այս սեն-  
եակն ալ Անգղիացի տիկնոջ մը համար պատրաստուած  
է, հս չէք կրնար նստիլ :

Թիք. — Հիմակու հիմա ես հս կը նստիմ, այսինքն  
այս սենեակը ես առի, սրան ալ դուն ա՛ռ, այն տի-  
կնոն ալ եթէ գայ . . .

Պաք. — Ուրեմն սա պայուսակս պահեցէք,

Թիք. — Զանգակալը զարնելուս սէս եկէք, եւ իմ  
մնտուկս ալ տարէք պահեցէք :

Պան. — Ծառ աղէկ, ուտելիք կուզէք :

Թիք. — Ծնորհակալ եմ, փորս կուշտ է :

Պան. — Դուք, պարոն,

Պաք. — (Անոցը հետ իլիալով) Ես, Կօնոչո, իրիկուհ-  
ները բան մը չեմ ուսեմ,

Պան. — (Խենդի են ինչ են, չկրցայ հասկնալ.) (Մեկնի)

Պաք. — Պարոն, իմ քունս եկաւ, պիտի սրակիմ :

Թիք. — Ի՞նչ ընեմ, կը կարծես թէ բարի հանդիսա  
պիտի ըսեմ քեզի :

Պաք. — Հոգս, թթում զլուի դուն ալ, (Դուռը բա-  
նալ) այ, աս ի՞նչ է, ասիկայ է սրանը ըսածը, հաւանցէ  
մը սարքերութիւն չունի : (ՄՏնէ)

Թիք. — Աղէք տելին ալ քեզի չի վաղեր, հազ չէ,  
նեղ տեղը կը գիրնաս, (Ծառ վախկաս մէկը ըլլալու է  
որ իրեն ուղղած անպատիւ խօսքերուս չի կրնար պա-  
տասխանել, կեցիր, անդամ մ'ալ փորձեմ,) Բարեկամ,  
եթէ հաւանց մ'ալ ըլլար, աւելի աղէկ գործիդ կուզար,  
անսնկ չէ :

Պաք. — (Գլուխը դանեն դուրս հանելով) Է՛, պարոն,  
քու ըրածդ կոշտութիւն եւ անկրթութիւն է, իմ պատ-  
ուցս չեմ ձգեր քու խօսքերուդ պատասխանել :

Թիք. — Կեցցես ուրեմն, կեցցես : (Ծափահարէ)

Րաք .— (Երթամ՝ հօրելքորս նամակ մը գրեմ, քանի  
մը ժամէն միւսիւ թիքըթօն աներոջս տունը երթալ  
պատրաստուիլս ալ իրեն խմացնեմ.)

Թիք .— Է՛, պարոն, շատ մի մրմռաք, զիսու ցաւ  
կը պատճառէք ինձ:

Րաք .— Անդին կորսուէ, անպիտան դուն ալ, (Կերպայ)  
Թիք .— Ի՞նչ ըսիր, ի՞նչ

Րաք .— Ի՞նչ պիտի ըսեմ, անպիտան ըսի:

Թիք .— Հա, սանկ ըսէ, ևս ուրիշ բան հասկցայ,  
(Մեկուսի) թէնւ բաւական կոչո մարդ մ'է, բայց ևս  
իրմէ կախորժիմ. այս, շատ գոհ ևր այս վիճակին  
ու ընթացքէն. ասկէց զատ, մարդս շատ զարմանալի  
արարած մ'է, մեր կամացը հակառակող մարդիկը կա-  
մաց կամաց կ'ակսինք սիրել. զոր օրինակ, ևս թէպէտ  
եւ միջահասակ ու կորիկ մարդ մը ևմ, բայց արինոտ  
ըլլալուս՝ կրուիլը շատ կը սիրեմ, ևւ . . .

Րաք .— (Ներսէն) Է պարոն, ալ բաւական է, մի՛  
տրանար:

Թիք .— Ի՞նչ կայ որ.

Րաք .— Ի՞նչ պիտի ըլլայ, քունս փախուցիր:

Թիք .— Զարմանալի՛ բան հիմա քեզի ևս խօսող կայ:

Րաք .— Թէնւ ճետ խօսիր, բայց աղմուկ պատ-  
ճառելով քունս կը փախցնեմ, ասկէց զատ կուզեմ իմա-  
նալ թէ փախաւ բառը թէնով կը գրուի թէ փերով:

Թիք .— Կուզէս թէնով գրէ. կուզես փերով, որու  
հոգ:

Րաք .— Բոել է որ դուն ուղագրութիւն չգիտես:

Թիք .— Չը գիտեմ:

Րաք .— Չըսն, կովուն մէկն ևս եղեր.

Թիք .— (Յաձէն) Քեզի պէս. (Յարձ) Ի՞նչ ըսիր ի՞նչ.

Րաք .— Ի՞նչ պիտի ըսեմ, կով ըսի:

Թիք .— Հա, սանկ ըսէ, ևս ուրիշ բան կարծեցի.

Րաք .— Հանգիստ թող զիս որ քնանամ . . .

Թիք .— Ծատ աղէկ, շատ աղէկ. (Մեկուսի) Կամաց  
կամաց սա մարդը աչքս կը մտնէ, Աստուած տայ որ  
փեսացուս ալ ասոր պէս անվախ համարձակութիւն մը  
ունենար, զի հիմակուան ժամանակս պատիւը ասանկ-  
ներուն է: Ահա քիչ ատենէն անէր ըլլալու վրայ ևմ, և  
Բարիզ երթալուս պատճառն ալ աղջկանս կիսէկուայի  
հետ ամուսնալիք երթասարդին վրայօք տեղեկութիւն  
առնել է. ևս զինքը չտեսայ, բայց լսածիս նայելով Միւ-  
սիւ Բաքտու փեսացուս 27ով 41 տարիքին մէջն է Եղեր.  
նուշի պէս բերան, խոչոր աչքիր, ձեւաւոր քիվի, ոտքերը  
սանկ զէպ իներս գարձած, բայց, աղէկ ա՛, հիմա փեսաս  
մտածելու ժամանակնէ . . . արդեօք քիչ մը քնանո՞մ կը-  
սես, հապա չողենաւը կանուխին մեկնի նէ ի՞նչ ընենք.  
Է՛, հոգս, քիչ մը քնանալու ևմ, տնչուշտ պանդուապե-  
տուին զիս կարգինէ եւ հազուելու ժամանակ կունե-  
նամ, (Կը հանուի եւ հանդերձները արտի վրայ կը դեէ)  
ըսել է որ մենք հիմա աղջինիս կը կարգենք կոր, ինչ  
աղուոր բան է աղջիկ զաւակը ժամ առաջ տեղաւորելը,  
որուն քեզ պատճառելիք հոգերէն ու զիսու ցաւերէն  
մէկ ձայնով կազամական վայ է եկեր անկէ ևսքը առնողին  
զիսուն:

Բայց սա մեր գիշերացին գտակը ո՛ւր է զացեր. հահ,  
զտանք, (Գլուխը, դճէ) զլուխիս տաք պահերու ենք  
որ՝ սա էշ զլուխ մարդուն պէս մենք ալ հարրուխ ըլլանք:

Րաք .— Կը քնանա՛ս կոր զրացի.

Թիք .— Այս այս, եւ կազակն որ զիս չարգինցնես :

Րաք .— (Գլուխը դուրս հանելով) Ինձի նայէ, բան-  
թալոնիս կոճակը փրթեր կորսուեր է, աւելորդ կոճակ մը  
ունիս նէ, ինձի տուր:

Թիք .— (Դուռը հաւելով) Մի նայիր, մի նայիր,  
ամօթ է :

Բարք. — Զգէ՛, այս նեղ տեղը խեղդուիլը բան մը չէ,  
թող որ գոնէ քիչ մը շունչ առնեմ և հովաճրիմ:

Թիք. — Անզին գնա, անզին, և մէկ մ'ալ զլուիրդ  
ահնակս մի խօթեր: (Դուռը կը քաշէ կը գոցէ)

Բարք. — Բայց, պարոն, բանասրիցիր զիս...

Թիք. — Չեռքէղ աղասելու և հանգիստ քնահալու  
համար ուրիշ ի՞նչ կրնայի ընկը.

Բարք. — Բայց...

Թիք. — Բայց մայց չի կայ ձայնդ քեզ քաշէ որ հան-  
գիստ քնահալու, (Դարեօլան կը պառլի) չըլաց որ ձայն  
հանէս և զիս անկրոջէս հանես, հուասացիր թէ վրադ  
զլուխդ կը պատում և աղոր մը զքեզ կը տփիմ,  
հասկա՞ր. (Միկուսի) Բերան է հա, ինծի է մնացեր:

Բարք. — Բայց ևս այս նեղ տեղը պիտի խեղդուիմ:

Թիք. — Զայնդ կորէ, սորված փորիկ ևս զուն,  
բան մը չև ըլլար, ասկէց զատ, տաքը հարրուխի հա-  
մար սուաջն դեղ է:

Բարք. — Եւ եթէ մենափո՞ւ պատասխանատուութիւնը  
քու վրադ պիտի ծանրանայ:

Թիք. — Հոդ չէ, հազար քիլոնց բիու մը չէ որ տակը  
ձգմուիմ:

Բարք. — Բայց...

Թիք. — Ե, այդ բացցերդ երկայն ըրիր ա՛,

Բարք. — Ի՞նչ ընեմ,

Թիք. — Ի՞նչ պիտի ընես, չնթուիէ, սրաուիէ, զիչեր  
բարի: (Ի՞նչ զիսու ցաւ մարդ է եղեր, էօֆ, խերս անփ-  
ծեց, վիրջապէս ձայնը մարեցաւ, մնցուչտ խեղդուած է  
այն նեղ տեղը:)

Բարք. — Ե, ինծի նայէ բարեկամ,

Թիք. — (Ա՛յ, սա ի՞նչ է, տակուին ողջ է, սա անփ-  
բաւութեանը կը նայի՞ք, մինչեւ հիմտ լմնալու էր:)

Բարք. — Բանթալոնս հանեցի բայց կոչիչներս չեմ

կրնար հանել, անանել նեղ տեղ մըն է հոս որ չեմ կրնար  
երերալ, զամուած մնացեր եմ:

Թիք. — Գէշ է կը գիրնաս, թող կոչիմներդ ոտքդ  
մնան:

Բարք. — Հոգիդ կը սիրես կատակը . ձգէ, եկուր  
որվոնք քաշէ:

Թիք. — Ես քաշելիքս քաշեցի, ուրիշ բան քաշելու  
ժամանակ չունիմ: Գիշեր բարի, աշա կը քնահալու: (Քր-  
նանալ, իչ մը ետք պանդոկապետուին վազելով կուզայ)

### ՏԵՍԻԼ Գ.

ԹԻՐԱԲՈՒՆ ԵՒ ՊԱՆԴԱԿԱՊԵՏՈՒՀԵՒՆ

Պանդ. — Պարոնայք, պատրաստուեցէք, հիմա ողի-  
տի մեկնի չոգենաւը:

Թիք. — Ե, ալ երկան ըրիր ա՛, թող որ քիչ մը  
քնահալու:

Պանդ. — Շոգենաւը կը մեկնի կրսեմ, օն, անապա-  
րեցեք, կամ կը հանիք կամ չէք հանիք:

Թիք. — (Յակելով) կը մեկնի մի, այսչափ չում,  
ահնանկ է նէ հազուիմ, քիչ մը թող սպասէ:

Պանդ. — Շուտ պարոն, կամ կը հանիք կամ չի  
հանիք:

Թիք. — Ահնանկ ասիուր կուտուի մի ևս, պառկելու  
ելլալս մէկ եղու, գոնէ կարսախներս ժողուելով մնան-  
կը զիր գոցէ:

Պանդ. — Միւս պարոնը ուր է, ան ալ թող պատ-  
րաստուի.

Թիք. — Անվկայ սա հաւացը մտեր էր, մինչեւ հիմտ  
խեղդուած ըլլալու է:

Պանդ. — (Բախուի սենեալը կ'երքայ) Պարոն, պատ-  
րաստուեցէք, չոգենաւը հիմա պիտի մեկնի:

(Բախուի պայուսակը եւ Թիբրօնի լարերը կը տանի).

ՏԵՍԱԿ. Գ.

ԹԻՐԱԹՈՆ ԵՒ ՌԱՔԱՐԻ

Բաք.—Ահա եկաց, մինակ բանթալոնս պիտի հագնիմ, (Քանրալօնը ձեռքը կը մտնէ):

Թիք.— (Ելլերով) Նոր քնանալու վրայ էի, բայց . . . հագուստներս ուր գնաց, սա աթոռին վրայ զրեր էի, բանթալոնս ալ չկաց, (Ներսէն զանգակի ձայն):

Բաք.— Բարեկամ առանց ինծի ջրլայ որ մեկնիս:

Թիք.— Խենդ եմ որ առանձին մեկնիմ, ճամբան ժամբանակս ի՞նչպէս պիտի անցնեմ, միայն թէ այդ բանթալոնս գողնալու չէիր տուր նայիմ:

Բաք.— Աստուած շատ քաշել չխաց,

Թիք.— Մ'երկնցնէր, տուր սա բանթալոնս որ հազնիմ:

Բաք.— Երկնցնելու, կարձեցնելու բան չունիմ, ապուշ կակրս, ասիկայ իմ բանթալոնս է. տես կոճակին մէկն ալ փրթած է:

Թիք.— Ոյտ խօսքերով չես կրնար համոզել զիս գող աւազակ. տուր սա բանթալոնը. (Կուգէ առնի)

Բաք.— Բայց եղբայր, տակայ իմս է:

Թիք.— Եւ զեռ կը պնդեմ, անսամօթ մարդ (Քրոնքեամբ կառնեն եւ պատուհաննեն կը նետէ) սա նայիմ. խերը տեսնաս, ես չի վայելելս ետքը դուն ալ մի վայելը:

Բաք.— Ի՞նչ ըրիր, գետը նետեցիր, շոգենաւը հիմ ելլայ նէ ի՞նչ պիտի ընկնէք, (Նոգենաւը կը մեկնի) տես սար հիմա կիրսծ սպուրդ, կո՛չտ մարդ. (Պատուհաննեն պոռալով) Ո՞չ, կեցի՛ր, տէր նաւապիտ, կեցիր, ոտքդ պագնեմ, անիւները մի՛ զարձներ, կեցիր, ըսթօրէր ըրէ, ըսթօրէ՛ր:

Թիք.— Թող տուաւ, հէ.

Բաք.— Հրամմեր ես, ապուշ, հիմա ի՞նչ պիտի ընես :

Թիք.— Իրաւոր զգիտեմ, միայն թէ՝ կարծեմ ես ալ հիմա վախէս թող պիտի տամ, աս ի՞նչպէս բան եղաւ:

Բաք.— Թող տալդ ալ վար անցնի գուն ալ ցնդած չուառական:

Թիք.— Թշուառական ծնածը գուն ես, բերանդ քեզ ժողուէ:

ՏԵՍԱԿ. Ե.

ՆԱՅՆՔ ԵՒ ՊԱՆԴԱԿԱՑԵՑՈՒՀԻՆ

Պանդ.— Բարեկամմեր, շոգենաւը գնաց, բայց դուք տակաւին հո՞ս էք :

Բաք.— Ո՞չ տիկին, ասանկ անվարտի վիճակով ու՞ր կրնանք երթալ, իմ պայտւասակս ի՞նչ ըրիք :

Թիք.— Հանդերձներս սա աթոռին վրայ դրուած էք, ի՞նչ եղաւ :

Պանդ.— Ես ձեր հանդերձները ևւ պարոնին պայտւասակը շոգենաւ զրկեցի :

Բաք.— Եւ ողորմնա քո արարածոց ևւ ինձ բաղմանդիմ, ահա հիմա փորձանքին պրշաւոր տեսակին հանդեպացնէք, այս կերպարանքով ու՞ր կրնանք երթալ :

Թիք.— Ուղղակի յիմարանոց. վասնի քաղաքաւ պետութիւնը՝ «Ես անվարտիները ու՞սկից եկան» ըսելով զմեզ բատ օրինի յիմարանոց պիտի զրկէ :

Պան.— Բայց պարոններ, դուք ըսիք ինձ թէ հանդերձնիս ժողուէ, մասուկը զիր և շոգենաւ զրկէ, ես անսամկ ըրի :

Բաք.— Ուրեմն աճապարեցէք բանթալոն մը դանել ինծի. եթէ պէտք ըլլայ՝ բոլոր զրացները արթնցուցէք, ժողովուրդը ոտք հանցէք, բանթալոն մը զտէք տէ՝ ի՞նչ կուզէ թող ըլլայ :

Թիք. — Այսինքն մշակել վարտիքներէն ալ ըլլայ նէ  
հոգ չէ, բաւական է որ բերելիքդ երկու հատ ըլլայ,  
ըստ որում երկուքս ալ անվարտի ենք:  
Պանդ. — Երթամ նպիծ, կրնա՛մ զահնել: (Մեկնի)

ՏԵՍԻ. Զ.

ԹԻՔԸԹՈՆ ԵՒ ԲԱՐԱՋԻ

Թիք. — Կաղաչեմ տիկին, պարապ չի վերապառնաս:  
Բաք. — Բերելիքդ ալ երկու հատ պիտի ըլլայ, չի  
մոռնաս:

Թիք. — Պարոն, ահա կանխաւ կիմացնեմ քեզ թէ՝  
մէկ հատ մը բերէ նէ ևս պիտի առնեմ.

Բաք. — Դուն մի՛, բայց ի՞նչ իրաւամբ,

Թիք. — Սա իրաւամբ որ՝ ևս ալ քեզի պէս առանց  
բանթալոնի մնացի. ասկէց զատ՝ ծնկուըներս ալ ցրտէն  
սկսանողալ, ուստի, ևս պիտի առնեմ:

Բաք. — Հը, գուն ան խելքին վրայ եղիր,

Թիք. — Դուն ալ ան խելքին տակը կամ քալը եղիր:

Բաք. — Բայց ևս զքեզ ի գութ չարմելու ձամբան  
գիտեմ:

Թիք. — Կուտ չունիմ որ չարմեմ, բանթալոնիս  
զրապնը մնաց:

Բաք. — Կուտ չիմ ըսեր կոր, գութ, գութ:

Թիք. — Ես ալ քեզի կուտ, մուտ, բութ չունիմ  
կլունեմ կոր:

Բաք. — Սակայն . . .

Թիք. — Սակայն, ի՞նչ որ ըսես՝ օգուտ չունի, ևս  
անվարտի կոչուելու ժամանակ չունիմ:

Բաք. — Բայց պարոն, ևս վաղը մէծ ընտանիքի մը  
մէջ պիտի մտնեմ, աս կիրապաններովս ի՞նչպէս կընամ  
երթալ, ամօթ չէ, տեսնողները ի՞նչ կըսեն.

Թիք. — Ի՞նչ որ կուզեն սն ըսեն, ևս ալ իս քաղքիս

մէջ մուծ մարդ մ'նմ, վաղն առաւօտ կառքէն իշնելուու  
պէս՝ տակաւին տունս չի մտած բարեկամներս բարի  
եկարի պիտի գան ինձի. կինս ատենախօսութիւններ պիտի  
ընէ զոր բուռն ծափահարութիւննք ևւ ոտնահարութիւննք  
պիտի ընդմիջնն. բոլոր աղջկունք ծաղկանց փունջնք  
պիտի նուիրեն ինձի. բայց եթէ ասանկ անվարտի կեր-  
պարանքով երեւմ՝ յիմարապահներէն պիտի շըմապառ-  
ումամ. կառնեմ ամի:

Բաք. — Էսեկ է որ ամենեւին օգուտ չի պիտի ընէ  
ձեզի մեր աղաչանքը:

Թիք. — Քանիի կառնեմ ևս քու աղա ձանրդ, ևս  
անանձի աղաճաներու կարեւորութիւնն չմմ ասք:

Բաք. — (Մեկնուի) Տէր Աստուած, ի՞նչպէս խօսք  
հասկցնելու է այս զդում զլուիին, ևս գանձ կըսեմ ան  
տանձ կը հասկնաց: (Բարձր) Բայց պարոն, պէտք է զիսո-  
նաս որ՝ եթէ պանդոկապետուհնն ընդամենը մէկ բան-  
թայն բերելու ըլլայ՝ երկուքնիս մէկանց չի պիտի կր-  
նանք զայն հագնիլ:

Թիք. — Սպէկ զիսցար ստիկայ:

Բաք. — Ուրեմն . . .

Թիք. — Պարապ տեղը սիրապ թունդ մի հաներ, և  
բանթողնը ոտքդ անցունեն ալ մտքէդ մ'անցներ, բառ  
որում, ևս պիտի հագնիմ զայն, տեսս, քեզմէ տւեփ ևս  
կը զողզպամ ցրտէն, ոտքերս ալ իրար կանցնին, վասն  
զի, ար ար ար ար ար ար կը մսիմ:

Բաք. — Կը յուսամ որ մինչեւ կնոջ վերապարձը  
փայտ կը կտրիս:

Թիք. — Հէ՛, մինչեւ վերապարձը մի՛, ևւ տակաւին  
պիտի ուշանաց:

Բաք. — Հազար ի՞նչ կարծեցիր զդում զլուխ, կէս  
գիշերին բանթալոն մը ուսակից պիտի զանէ անմիջապէս.

Թիք. — Ի՞նչ ըսիր, զդում զլուխ մի՛.

Բաք .— Այս , զգում գլուխ ըսի :

Թիք .— Սանկ ըսէ , ես ուրիշ բան կարծեցի : Ուրիմն ,  
առ այժմ անկողին մտնեմ տաքնամ , մինչեւ որ պահպա-  
կապեառնին վերադառնայ (Անկողին կը մտնէ) գուն աղւոր  
ձան մը ունենալու ես բարեկամ , վասն զի երիտասարդ  
ես , բան մը կանչէ նազինք , ես ալ քիչ մը քնանամ ,  
որովհետեւ պառկել եղալս մէկ եղաւ : Օ՞ն սկսէ :

Բաք .— Շատ աղէկ : (Կուղեմ աղւոր խաղ մը խա-  
ղալ իրեն : ) (Երգի)

«Անոյշ քնառին աչերն առեր ,  
Անոյշ հովերն ալ տարուրեր ,  
Մեր ջորին քունն է եկեր ,  
Անոյշ ձայնով ըսիմ օր օր ...»

Թիք .— Ոհ , աս ի՞նչ աղւոր երգ է , բաւարան աղ-  
դեց սրախ , չարունակէ , չարունակէ , թէեւ եղանակը  
գէշ չէ բաց կոկորդդ քիչ մը բիւրիզիւ է . ի՞նչ որ է ,  
օրօրի տեղ կանցնի կոր , չարունակէ :

Բաք .— (Կ'երգի)

Քնացընեմ խոփած ջորիս ,  
Որ միտ կուտէ խոսն ու գարիս ,  
Կը խոխոայ իմ անվարտիս ,  
Քոյլը նատիմ , ըսիմ օր օր :

Դգում գլուխ , մէջը պարսապ ,  
Ապուշ , կանկառ եւ պամպառակ ,  
Մնզգայ է անօրինակ՝  
Թող չնթըուի , ըսիմ օր օր :

(Թիքը սկսի խոկալ , Բախու կամացուկ մը անոր  
բովը կը մտնէ ու կը պառկի : Քանի մը վայրկեան լրութիւն : )

Թիք .— (Յանկարծ պոռայ) Բայց սա անկողնոյս մէ-

Ջինը ի՞նչ է . Է՛ . ալ բաւական չեղաւ սրիկացութիւնպ ,  
պա՛րոն :

Բաք .— Կոշտ մարդ , ոտքերովդ կընակս ծակեցիր :

Թիք .— Դուն ալ ա՛ւանակ , կոշիկներովդ քիթս  
կոսրեցիր :

Բաք .— Հոգ չէ , ձայնդ քաշէ , հիմա ցաւը կ'անցնի :

Թիք .— Անհանգիստ մի ընկը զիս , անկողնէս ելիր ,  
հաւնոցդ մտիր :

Բաք .— Այդ անկարելի է :

Թիք .— Եյ ասոր վերջը :

Բաք .— Զայնդ քաշէ , եղոր պէս քնանանք , մինչեւ  
որ բանթալըներնիս զան գինզ արթնցնեն : (Քնանան ,  
5 վայրկեան լրութիւն )

### ՏԵՍԻՐԸ ԵՎ

ՆՈՅՆՔ , ԱՆԳԴԻԱՑԻ ԿԻՆՔ , ԵՐ ԾԱՌԱՆ ԵՒ ՊԱՆԴԱԿԻ  
ԾԱՌԱՆ

Կինը .— Թույու մէջ , տէթ իդ իթ թիւը :

Պանդ . Ծառ .— Հրամմեր էք ակկնն , այս տեղն է :

Կինը .— Իթ իդ նօթ պիյու թըֆըլ , տէթ ֆոռ մայ  
կոռւմ :

Պանդ . Ծառ .— Այս տիկնն , թէ գեղեցիկ եւ թէ  
թըֆըլ , ճան ալ կերպ զըրըռ զըրըռ :

Կինը . Հուպ իդ իթ :

Պանդ . Ծառ .— Աղուոր խորոված խոզի աղըր ու-  
նիմ , տապկած բաթաթէսով չըջապատեալ :

Կինը .— Այ ուի նօթ , (Ծառային) կօ՛ն ըսիր :

Ծառ .— Վէրէվէլ . . . կօտնախտ :

Պանդ . Շատ աղէկ , երկու շիշ ալ քօնեաք : (Ծառայի  
կը մեկնին )

Կինը .— (Գլխարկի եւ շալը կը հանէ , ու Պար-  
եօլախին մօտեցած ատեն Բախուն եւ Թիքը ըսնելով՝

սարսափանաւ կը գոչէ, Ա՛հ, չողինք, չողինք : (Գլխաւկը  
եւ շալլ առած կը փախչի)

Թիք .— Մի վախնաք տիկին, մենք չողի չենք,  
անսառն ալ չենք :

Բաք .— Ես Գաղիսացի հեծելազօր մ'եմ :

Թիք .— Ես հեծելազօր չեմ՝ բայց Գաղիսացի եմ :

Բաք .— Հիմա հաւացար, կոշտ մարդ, տիկինը  
վախցուցիր :

Թիք .— (Դարձեալ սկսու զիս անպատճել, որչափ  
ալ կախորժիմ իւր այս վիճակին, կամաց կամաց աչքս  
մանելու վրայ է աս անձառնին, բայց մե՛զք որ չկրցաւ  
ոսքը բանթալն մը անցունել :

Բաք .— Դուրսը ձայն մը կայ, էրիկ մարդու ձայն  
մը : (Պատուհանն կը նայի)

Թիք .— Ի՞նչ կայ, ի՞նչ եղու :

Բաք .— Աս ի՞նչ բազր է, ո՞վ երջանկութեանս,  
(Վազելով կը մեկնի)

### ՏԵՍՔԻ ԸՆԿԵՐՈՒՅՆ (Մինակ)

ԹԻՔԻԹՈՒ (Մինակ)

Թիք .— Ո՞ւր կերթաս, վախուց ինչ ըրաւ: (Պատուհանն կը նայի) Այ թշուտական, աս աւազակին նայեցէք,  
փողոցին մէջ մարդ կը կորպատէ, իձմէ աւելի վարպետորդի մէկ եղեր, անիկա բանթողնը գտաւ, բայց, ի՞նչ  
է այն, ի՞նչ կը անմանմ: Հա՛, հա՛, հա՛, բաքչչո մըն է  
եղեր, ան ալ մեղի որէս անվարտի, (Ներսէն խոկալու ձայն) Աս ի՞նչ ձայն է, զարմանք, նուռագարանի  
ձայն է, չէ, մնձ մարդու մը խոկալուն կը նմանի,  
աղէկ ա, եթէ կը խոկայ՝ ըսել է կը քնանաց, թէ որ  
կը քնանաց ըսել է պառկած է, թէ որ պառկած է,  
ըսել է հանուած ըլլարու է, ո՞վ սուրբ Բանթալն,  
զան ինծի բանթալն մը զրկէ: (Կամաց մը սենեակ

կը մսնէն եւ ձեռքը բանքալոն մը տեսարան կու գայ) Օհ,  
փառք քեզ տէր, ձեռքիս մէջն է, հազնելու եմ, բայց  
զգուշութեամբ, ձայն հանելու չիկար, (Անապարանօֆ  
շարութիւնն հայելով) ոհ, այսչափ ալ նեղ բանթալոն  
կըլլայ եղեր :

### ՏԵՍՔԻ ԸՆԿԵՐՈՒՅՆ

ՆՈՅՆ ԵԽ ԲԱՆՔԱՄԻ

Բաք .— (Կամաց մը դունեն մենելով) Ինչ կը տեսնեմ,  
աս բանթալոնը ո՞ւրիէ գտեր է. (Անձայն բայցենով կը  
մօտեալ եւ մեկ ոսքը բանքալոնին մէջ կը խօքէ):

Թիք .— Սիսակ հագայ:

Բաք .— Զէ, ևս սիսակ հագայ.

Թիք .— Հէ, զո՞ւն ևս.

Բաք .— Այսու: ևս ևմ.

Թիք .— Է աս հիմա վայեց.

Բաք .— Կուզէ վայէ, կուզէ չի վայէ, ընկեր չենք մի.

Թիք .— Աման, սոքդ սրագնեմ, մի՛ քաշեր, մի՛

չըեր, հիմտ սիսի սրատատենք.

Բաք .— Հոգս . սուսկը ևս չեմ տուած:

Թիք .— Էօփ, Սիսամացի երկորեակներու խա՞զը կը

խաղանք ինչ կընենք:

Բաք .— Զիշտեմ.

Թիք .— Շուտ ըրէ . մէջէն դո՞ւրս ե՛լ . կը հրամայեմ

քեզի:

Բաք .— Կէսը կուզեմ.

Թիք .— Ինչ իբաւամբ.

Բաք .— Անվարտիութեան իբաւամբ.

Թիք .— Մի քաշեր,

Բաք .— Զի քաշեմ մի՛, միւս սոտքն ալ կուզեմ:

Թիք. — Թող տուր.

Թաք. — Չունիմ որ թող տամ,

Թիք. — Սա ոտքդ գուրս հանէ.

Թաք. — Սասուած խելք տայ.

Թիք. — Կը պատոփ կոր, մ'երերար. (Կը պատռեն) և  
փառք յաւխեանս ամէն, հրամմէ նայինք:

### ՏԵՍԻՒՆ. Ժ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՊԱՆԴՈԿԱՊԵՏՈՒՀԻՆ

Պան. — Հիմա այս եղաւ, պարոններ, Անդղեացի  
տիկնոջ պանդոկէս փախչելուն պատճառ եղաք, ուստի  
պատրաստուեցէք անոր ինձ ունեցած պարտքը վճարել:

Թիք. — Ո՞չափ կը պահանջէք իրմէ:

Պան. — Քանի գրանք:

Թիք. — Մասուկս եթէ հիմա հոս ըլլար՝ բան մը  
ըսել չը:

Թաք. — Իմ ալ չոգենաւ դրկած պայուսակս եթէ հոս  
ըլլար:

Պան. — Բարեբազզարար ձեր մասուկներն չոգենաւին  
չեն կցցեր հասցնել, Պաթիսթէն, մասուկն ու պայուսակը  
ներս բերէք, (Ծառայք կը բերէն) ահաւասիկ Միւսիւ  
Թիքըթոնի մասուկը:

Թաք. — Ի՞նչ Թիքըթոն մի՞.

Թիք. — Հրամմեր էք, մասուկս էտուար Թիքըթոն է:

Պան. — Սյս ալ միսիւ Թաքառչի պայուսակն է. (Երբայ)

### ՏԵՍԻՒՆ. Ժ.Ա.

Թիքըթոն ԵՒ ԸԱՐԱՐՈՒ

Թիք. — Ռաքառ մի՛

Թաք. — Սյո, պարոն, Անթուան Թաքառ որ ամուս  
ոյանալու համար Բարիկ կերթայ:

Թիք. — Ամուսնանալու համար մի՛, արդեօք իմ  
փեսացուս ես:

Թաք. — Հէ՛, արդեօք իմ աներցուս ես:

Թիք. — Ոչ, այս, հոգիս վկայեց, աղջիկս քեզի  
տուի գնաց:

Թաք. — (Ո՞վ երջանկութեանս, )

Թիք. — Ուրեմն զիրկս եկուր որ զքեզ համբուրեամ:

Թաք. — Ա՛չ:

Թիք. — Բայց ի՞նչ վարպետորդի լակոտի մը կը նը-  
մանիս :

Թաք. — Ա՛չ, աներդ իմ պատուական:

Թիք. — Ա՛չ, փեսայդ իմ թշուառական:

Թաք. — Կնկանս հայրը:

Թիք. — Աղջկանս էրիկցուն:

Թաք. — (Մեկուսի) Գլուխն է դդում:

Թիք. — (Մեկուսի) Խելքը կը նմանի ոտքերուն:

Թաք. — (Մեկուսի) Միտքն այ կը նմանի սրունքներուն:

Թիք. — Ինձի նայէ, երեսիդ ըսել չըլլայ շատ տգեղ  
մարդ մ'ես:

Թաք. — Եւ ի՞նչ, դուն ալ կը կարծես թէ գեղցիկ  
մարդ մը ես:

Թիք. — Զի հաւնեցար, ի՞նչս պակաս է:

Թաք. — Խելքը, միտքդ, որով անպիտան և կոչտ  
մարդ մը եղած կըլլաս:

Թիք. — (Ոհ, ճշշտ հին Սպարթացւոց քաջութիւնը  
ունի.) Ինձի նայէ չըլլայ որ այս կտրիճութիւնդ ձեռքէ  
հանես, քու այդ բնաւորութեանդ չստ հաւնեցայ. քեզի  
պէս փեսայ մը կը վնասոէի, փառք Տիրոջը, ահա գտայ.  
աղջիկս քուկդ է:

Թաք. — Ոհ, չուրհակալ եմ:

Թիք. — Իմ տանս մէջ պառկիլ ուտել խմել, և աղ-  
տոսներդ մեր լուացարարին ձեռքովը լուալ տալու պայ-  
մանաւ ինձի տուն փեսայ պիտի գաս. քու հաճոյիցըդ,  
այսինքն մանր մունը ծախսերուդ համար ամիսը

տասը Գրանք պիտի տամ քեզի. ի՞նչ կըսես, արդեօք  
բանիող կուգա՞յ:

Իաք. — Աղջկանդ օժիտը ա՞սէ:

Թիք. — Հիմակու հիմա, ուրիշ ի՞նչ պիտի ըլլար:

Իաք. — Ես ալ կարծեցի թէ գանձ գտայ:

Թիք. — Զի հաւնեցա՞ր:

Իաք. — Օ, ո՞չ չի հաւնելիք չեմ ըներ, բայց այդ  
է նէ, բան մը ըսել չէ:

Թիք. — Շատ աղէկ, դուն ըլլալուդ համար ահա  
հինգ ևս կաւելցնեմ, որով ամիսը տասնընհինգ Գրանք  
պիտի առնուն. իսկ մեռնելէս ետքը աշխարհիս վրայ  
ունեցածս ալ չունեցածս ալ ամբողջապէս ձերն է. ալ  
ասոր ըսելիք մը չունիս ա:

Իաք. — (Եթէ աւելի պնդենք՝ բայց պիտի մասնք):  
Թիք. — Եյ. ի՞նչ կըսես, որոշեցի՞ր:

Իաք. — Այո, կընդունիմ:

Թիք. — Ուրեմն բանթալոններնիս հագնելով շուտ մը  
տուն երթանք, իսկզ աղջկանս աշքերը հիմա ճամբան  
մնացած է:

Իաք. — Դուն անհոգ եղիր, ես տուն երթալուս պէս  
աղջկանդ արտմութիւնը կը փարասեմ. քայէ, երթանք.  
բանթալոննիս վնտուել եղանք՝ աներ փեսայ զիրար զը-  
տանք: (Կը հագուին եւ միաբերան կ'երգեն)

Թիք. } Ալ հագուեցան անվարտիներ.

Իաք. } Աներ փեսայ զիրար զտեր.

Իաք. — Ասանկ փեսին ատանկ աներ.

Թիք. — Ատանկ փեսին՝ այս ալ շատ էր:

— 80 — ՎԱՐԱԳԼՅԵՐ ԱՌՋՆԵՒ



# ԱՇՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Ա. Պոլիս, Զագմտենքլար Խօգոււու. թիւ 29  
ԳՐԱՎ. Ա. ՀԱՐՈՒ—ՀՐԱՏԱՐԱԿԻՉ  
Հայութեալ 1868 ին

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Սուերֆ հին դեմքերու 1635-1900, գրեց Յ. Գ. Մըմբեան  
Կեանիք գործածութիւն, Լորու էլլվալիւրի. թր. Գ. Ռոկեան  
Լիակատար նոր եղարան կամ Ընդարձակ Քնար Հայկա-  
կան, 192 երես 172 երդ

Արեւելքի բոցեր, բանաստ. Ե. Գոլանճեան

Կարմիր ժամուց, Արփիար Արփիարեան

Պարտեզ բարդական և զործ դասիարակ, Փ. Հազարապ  
Վեղարաւոր հերոս, գրեց Մմրաստ Բիւրատ

Մի անմեղ զնի կամ Խորտակու ած սէր, Ա. Շահնազար

Աւարայրի արծիւր կամ Վարդանանք, Ս. Բիւրատ

Բիւզանդական Հայ կայսեր ու կայսրուհիներ, 10 պոկ.

Բուրգերեն. բանաստեղծական Երկեր, Ս. Բիւրատ

Կենս. Եզմիրեն և Դուրեան Աներու Ս. Գարամաճեան

Մրիս վերենը, բանաստեղծ. Աշուղ Շահնազար

Ազատարար Բանակին յաղքական մուտքի ի Կ. Պոլիս

Ռւխտին Ողջակիւր կամ Կոյս մենացած կինը, Ե. Ե.

Ապշիւ Համիլս Բ. Մերուժան Պարսաննան

Ապշիւ Համիլտ չերշիութիւնը, Տ. Շէփիլիեան

Հեղինե կամ գաղտնիք մը ի Կ. Պոլիս Յ. Հ., 2 հար. 1

Թապլանեար Փիլիկ Աղպօր Աղջիկտեսը, Տ. Փափազեան

Ժենըլիեվ, բարյոյալիւզ, Թրիս. Շմիտ թարդ. ի գաղցին.

Մոյրեալ նամբորդը կամ Զին. օրիւան, կատակ. 1 արար

Երանս ազբար կամ Թապլանեար Վարծապեսը, կատա-

կերգութիւն 1 արար, Տ. Փափազեան

Բարեկենդանի անկուտիներ կատակերգութիւն 1 արար

Եներեւոն բիւրել և Քիւտանդիր Մառայ, կուրդ Հներ

Բունի Ամուսութիւն, Մութիւր, կատակերդ. 1 արար

Վեց ու կես պօրի մառան մենացած սնտուկը Գ. Ռշտունի

կատակերգութիւն 1 արար

Իրավիւ ենի ենիւ իրբապը, Ալաթուրգա, Ալաֆրիկ.

Վերայիշալ գրատաւնը կը վաճառաւին, կրօնական. պատ-

րանատառ թժական, թատերական, վեպական, գորոցական գրքեր, գու-

ցիւ գնով և զեղչով: Բառառիկ զեղչ մաճառողաց :

Հայաստանի Ազգային գրադարան



NL0431313

5905

